ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1467

26.09.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ
ՄՏԻՆ № 3783
29 09 2014 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիսի 26-ին թիվ 2621/1412 գրությամբ Դիտորդական խումբը հայտնել էր, որ ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Սիսյանի ՁՊՎ-ի խցերի պատուհանները բացել և փակելու համար մեծ ջանք է ներդրվում և ամբողջությամբ պատուհանները լիարժեք չեն բացվում, իսկ այդ գործողությունը ամեն օր կատարել և խցերը օդափոխել հնարավոր չէ:

Ի պատասխան սույն թվականի հունիսի 26-ին թիվ 2/2-1-1542 գրության 2-րդ կետով տրվել էր մեկնաբանություն, որ <<ՁՊՎ-ի խցերի պատուհանները, որոնք շենքի կառուցման ժամանակվանից տեղադրվել էին առանց ծխնիների, ներկայումս ձևափոխվել և սարքավորվել է այնպես, որ դրանք բացվեն և խցերը օդափոխվեն ամեն օր: Ինչ վերաբերվում է պատուհանները բացվելուն, ապա ամենևին էլ կարիք չկա բարձրանալ բաժնի X սենյակ, որտեղից էլ անցնել զբոսաբակի մետաղածածկի վրայով, ինչպես նկարագրվել էր Դիտորդական խմբի կողմից: Պատուհանները բացվում և փակվում են խցերի ներսից՝ փայտե ձողի միջոցով, քանի որ փականը բարձր է>>:

Ներկայացվածի վերաբերյալ Դիտորդական խումբը նոր ուսումնասիրություն է կատարել սույն թվականի սեպտեմբեր ամսին տվյալ ՁՊՎ-ում և Ձեզ են ներկայացնում փաստերը՝ ըստ ապացույցների, որ ոչինչ չի փոխվել:

1. Խցերի պատուհանները բացվում են խցի կողմից ձողով հրելու միջոցով
2. Խցերի պատուհանները բացվում են 5-10սմ լայնությամբ

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՆ № 7575
29 09 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

Խցերի պատուհանները փակելու համար ձևաչափը փոխվել է: Պետք չէ բաժնի որևէ սենյակից ներթափանցել զբոսաբակի մետաղածածկի վրա, այլ՝ զբոսաբակ դուրս բերող դռան վերևի մասում ստեղծվել է փականով դուռ, որը բացելուց հետո աթոռի կամ աստիճանի օգտագործման միջոցով, ոստիկանը պետք է սողալով անցնի զբոսաբակի մետաղածածկի վրա, որպեսզի կարողանա փակի: */կից ներկայացված են Դիտորդական խմբի կողմից ներկայացված փաստերի բոլոր լուսանկարները/*

Այսպիսով՝ խնդրում ենք բացառության կարգով հնարավորություն տալ Միսյանի բաժնի ղեկավարությանը ներկայիս պատուհանները ապամոնտաժել և նոր օրգանական ապակուց եվրոպատուհաններ տեղադրել խցերի ներսի կողմից, Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի խցերի պատուհանների ձևաչափով:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2660 <<22>> 10 2014թ.

Ձեր 26.09.2014թ. թիվ 2621/1467 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում և Սյունիքի մարզային վարչությունում:

Հայտնվում է, որ ոստիկանության Սիսիանի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ի խցերի պատուհաններն ապամոնտաժվել են, ներկայումս աշխատանքներ են տարվում խցերում օրգանական ապակուց պատուհաններ տեղադրելու և դրանք ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի>> պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կատարված աշխատանքների արդյունքների մասին կհայտնվի լրացուցիչ:

ՀՀ ոստիկանության շտաբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2913 << 11 >> 11 2014թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ի լրումն 22.10.2014թ. թիվ 2/2-1-2660 գրության հայտնվում է, որ ոստիկանության Սիսիանի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ի խցերի պատուհաններն ապամոնտաժվել են և տեղադրվել մետաղապլաստե պատուհաններ՝ օրգանական ապակիներով: Ներկայումս խցերում իրականացվում է պատշաճ օդափոխություն:

ՀՀ ոստիկանության շտաբ